ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ՝ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ» ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՐԱ ՈՒՂԵՐՁԻ ԱՌԻԹՈՎ

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը եղբայրական ջերմ սիրով ստացավ Նորին Սրբություն Պողոս Զ Պապի ուղերձը «Խաղաղության օրվա» առթիվ և 1973 հունվար 19 Իր հետևյալ գրությամբ, որպես հայ եկեղեցու գերագույն Պետ, Իր վերաբերմունքն արտահայտեց հանուն հայ եկեղեցու լրության և հավատացյալ հայ ժողովրդի:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ

Հռոմ

Նոր տարվո սեմին հուզումով կարդացինք խաղաղության Ձեր ուղերձը, հագեցած Փրկչի Ավետարանի կենդանի շունչով:

Ճշմարիտ է՝ թե «խաղաղությունը պայմանն է և համադրությունը մարդկային համակեցության»:

Ճշմարիտ է՝ թե «հրամայական դարձած է նոր և համաշխարհային (տիեզերական) մանկավարժություն մը, խաղաղության մանկավարժությունը»:

Ճշմարիտ է՝ թե «պետք է ունենալ խաղաղության քաջությունը»:

Եվ ա՛յո, ճշմարիտ է՝ թե «խաղաղություն հնարավոր է»:

«Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ, որ առնեն զխաղաղութիւն» (Հակոբա առաք. Գ 18):

Ձերդ Սրբություն, բարի հովիվ սիրո և խաղաղության, ապրեցեք երկար և աղոթեցեք բոլոր մարդկանց համար, զի «սէր ոչ երբէք անկանի» (Ա. Կորնթ. ԺԳ 8):

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19-ը հունվարի 1973 թ.,
Ն. Էջմիածին